Հաշվետվություն

1. *Անունը, Ազգանունը*

   Վահրամ Մկրտչյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

   Ստրասբուրգ, Ֆրանսիա, 2017թ. դեկտեմբերի 6-8-ը

4. *Հրավիրող կողմը*

   Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտե

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)

Տարեկան երկու անգամ Ստրասբուրգում տեղի են ունենում Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի (CDPPE) նիստեր: Նշված կոմիտեում հանդիսանում եմ Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչը: Նիստերին մասնակցությունը կարևոր է այն առումով, որ նիստերի ժամանակ Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի կողմից ընդունվում է նախորդ տարիների կատարողականի հաշվետվությունը և հաստատվում հաջորդ տարիների գործողության ծրագիրը:

6. *Քննարկված թեմաները*

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի դեկտեմբերի 7-ին և 8-ին տեղի ունեցած նիստերի ընթացքում քննարկվել է 2016-2017 թվականների անդամ պետությունների կրթության բնագավառում իրականացրած ծրագրերի կատարողականի հաշվետվությունը: Մասնավորապես անդրադարձ է կատարվել ծրագրի շրջանակներում ձեռք բերված

արդյունքներին և ծրագրի հետագա զարգացման համար առանձնացված առաջնահերթություններին: 2016-2017 թվականների կատարողականի հաշվետվության ներկայացման ընթացքում ավելի մանրամասն խոսվեց հետևյալ ծրագրերի մասին՝ «Կրթություն հանուն ժողովրդավար քաղաքացիության և մարդու իրավունքների», «Ժողովրդավարական մշակույթի իրավասությունները», «Հոլոքոստի հիշատակում և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելում», «Փախստականների որակավորումների ճանաչում» և «Մեծահասակ փախստականներին լեզուների ուսուցանման հարցում աջակցություն (Եվրոպայի խորհրդի գործիքակազմ)»:

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի 2016-2017 թվականների կատարողականի հաշվետվությունը ամփոփում էր նաև Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում ԵԽ-ի Արևելյան Գործընկերության անդամ երկրներում իրականացված ծրագրերը:

Հարկ եմ համարում նշել, որ կոմիտեն անդրադարձավ նաև կրթական ոլորտին առնչվող ՀՀ-ում 2015-2017թթ. իրականացված «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրին և վերջինիս արդյունքներին: Եվրոպայի խորհրդի Ժողովրդավար քաղաքացիության և մասնակցության գլխավոր տնօրինության տարածաշրջանային և երկկողմ համագործակցության բաժնի ղեկավար Սառա Քիթինգը, ամփոփելով ծրագրի արդյունքները, նշեց, որ մասնավորապես ծրագրի շրջանակներում մշակվել են.

1) բուհերի տիպային էթիկայի կանոնագրքեր՝ ուսանողների, վարչական և ակադեմիական աշխատակազմի համար,
2) բուհերում կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործիքակազմեր,
3) բուհերում ուսումնական ծրագրերի մշակման և ուսանողների գնահատման հաշվետվողականության և թափանցիկության գործիքակազմեր,

4) բուհերում մարդկային ռեսուրսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության գործիքակազմեր:
Ծրագրի շրջանակներում ստեղծվել է նաև բուհերի կառավարման ոլորտում թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստող առցանց հաշվետվությունների հարթակ:

Ծրագրի արդյունքների և կարևորության վերաբերյալ կոմիտեի լիագումար նիստի ժամանակ հանդես եմ եկել ելույթով և շեշտել, որ ծրագիրը պետք է շարունակական բնույթ ունենա, և ծրագրի արդյունքները պետք է արդյունավետ ներդրվեն ողջ բուհական համակարգում, որպեսզի էթիկայի կանոնների և բարեվարքության ամրապնդումը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարը դառնա կրթական գործընթացում մասնակից դերակատարների գիտակցական պատկերացումը:
Եվրոպայի խորհրդի մեր գործընկերները իրենց հերթին նշեցին, որ կարևորում են ծրագրի շրջանակներում ձեռք բերված արդյունքները և ջանքեր չեն խնայելու հայկական փորձը այլ երկրներում ներդնելու համար:

Կոմիտեն նաև ընդունեց 2018-2019 թվականների գործողության ծրագիրը: Մասնավորապես անդրադարձ կատարվեց հաջորդ երկու տարիների համար իրականացվելիք կրթական ծրագրերի գլխավոր նպատակներին և ակնկալվող արդյունքներին, որոնց առանցքային թեզերից է նաև այն, որ կրթության ոլորտի քաղաքականության մշակողները և դերակատարողները ձեռնարկեն կոնկրետ քայլեր պատրաստելու ուսանողներին և շարունակական կրթություն ստացողներին՝ որպես կենսունակ քաղաքացիներ: Շեշտվեց կրթական գործընթացի թվայնացման կարևորությունը, փախստականների կրթությունը, ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից 4-րդ նպատակին՝ որակյալ կրթությանը հասնելու պատրաստակամությունը, բարձրագույն կրթության ժողովրդավար առաքելությունը:

Կոմիտեն որոշում ընդունեց ստեղծել Համաեվրոպական կրթության քաղաքականության խորհրդատուների ցանց (EPAN), որի մեջ յուրաքանչյուր երկրից պետք է ընդգրկվի երեքական ներկայացուցիչ: Առաջարկվեց մինչև 2018թ. հունվարի

31-ը ԵԽ-ի գլխավոր տնօրինության քարտուղարություն ուղարկել թեկնածուների տվյալները:

2018-2019 թվականների գործողության ծրագրի շրջանակներում որպես ակնկալող արդյունք առանձնացվեց նաև անդամ պետությունների կողմից կրթության բնագավառում ներառական մոտեցումների մշակումը: Այս առումով մասնակից երկրներին կոչ արվեց դիմելու «Ժողովրդավար և ներառական դպրոցական մշակույթի ներդրման ծրագրին»:

7. *<u>Հանդիպումները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>*

Հանդիպումներ եմ ունեցել Եվրոպայի խորհրդի Ժողովրդավար քաղաքացիության և մասնակցության գլխավոր տնօրինության կրթության դեպարտամենտի ղեկավար Սյուր Բերգանի և Տարածաշրջանային և երկկողմ համագործակցության բաժնի ղեկավար Սառա Քիթինգի, ինչպես նաև «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի գլխավոր համակարգող Կատյա Դոլգովայի հետ: Վերջիններիս հետ զրույցում նշել եմ Հայաստանում հետագա նոր ծրագրերի իրականացման անհրաժեշտության մասին:

8. *<u>Գործուղվողը</u>*

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Վահրամ Մկրտչյան

9. *<u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>*

19.12.2017